ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

# Ո Ր Ո Շ Ու Մ 7

« 20 » փետրվարի 2019թ                                        ԹԻՎ 3 ՆԻՍՏ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ավագանու թիվ 3 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Ա. Յաղուբյան | ………………… | ………………… | ………………… |
| Գ. Թեմուրյան | ………………… | ………………… | ………………… |
| Է. Սահակյան | ………………… | ………………… | ………………… |
| Գ. Գրիգորյան | ………………… | ………………… | ………………… |
| Ս. Նազարյան | ………………… | ………………… | ………………… |

Համայնքի ղեկավար                                        Վ. Գրիգորյան

2019 թվականի փետրվարի 20
Գրիբոյեդով համայնք

5

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Գրիբոյեդով
համայնքի ավագանու
2019 թվականի փետրվարի 20-ի
N 7 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ

1. Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 20-ի թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. / Վ. Գրիգորյան /

2.Գրիբոյեդով համայնքի սեփականության 2018 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

զեկ. / Վ. Գրիգորյան /

3 Հայաստանի Հանրապեըության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

զեկ. / Վ. Գրիգորյան /

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

զեկ. / Վ. Գրիգորյան /

5. Գրիբոյեդով համայնքի կենտրոնական այգու և հարակից տարածքի բարեկարգման համար անհրաժեշտ նյութերի և ապրանքների ձեռք բերման համար գումար հատկացնելու մասին:

զեկ. / Վ. Գրիգորյան /

6.Գրիբոյեդով համայնքում « Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում կազմակերպված շաբաթօրյակի աշխատանքների իրականացման համար գումար հատկացնելու մասին:

զեկ. / Վ. Գրիգորյան /

7. Համայնքային ենթակայության շենքերի չափագրման համար գումար հատկացնելու մասին:

զեկ. / Վ. Գրիգորյան /

Ավագանու անդամներ՝

Սահակյան Է.

Յաղուբյան Ա.

Թեմուրյան Գ.

Նազարյան Մ.

Գրիգորյան Գ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ 8

« 20 » փետրվարի 2019թ                                        ԹԻՎ 3 ՆԻՍՏ

## ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2018ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի սեփականության 2018 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Ա. Յաղուբյան | ………………… | ………………… | ………………… |
| Գ. Թեմուրյան | ………………… | ………………… | ………………… |
| Է. Սահակյան | ………………… | ………………… | ………………… |
| Գ. Գրիգորյան | ………………… | ………………… | ………………… |
| Ս. Նազարյան | ………………… | ………………… | ………………… |

Համայնքի ղեկավար                                        Վ. Գրիգորյան

2019 թվականի փետրվարի 20
Գրիբոյեդով համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9

« 20 » փետրվարի 2019թ ԹԻՎ 3 ՆԻՍՏ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով,և հիմք ընդունելով ղեկավարի զեկույցը.

Համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2018թվականի բյու-ջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Ա. Յաղուբյան | ………………… | ……………….. | ………………… |
| Գ. Թեմուրյան | ………………… | ……………….. | ……………….. |
| Է. Սահակյան | ………………… | ……………….. | ……………….. |
| Գ. Գրիգորյան | ………………… | ……………….. | ……………….. |
| Ս. Նազարյան | ………………… | ……………….. | ……………….. |

Համայնքի ղեկավար Վ. Գրիգորյան

2019 թվականի փետրվարի 20
Գրիբոյեդով համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի
ԹԻՎ 9 ՈՐՈՇՄԱՆ

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ

### ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

| Հ/Հ | Եկամուտների անվանումը | 2017թ պլան | 2017թ փաստ | 2018թ պլան | 2018թ փաստ | 2017թ կատարման % | 2018թ կատարման % |
|---|---|---|---|---|---|---|---|
| I | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ-ԸՆԴԱՄԵՆԸ | 44868.8 | 43184.4 | 49471.3 | 41183.0 | 96.2 | 83.2 |
| 1. | Սեփական եկամուտներ | 15023.6 | 13339.2 | 19616.1 | 11327.8 | 88.8 | 57.7 |
| 1.1 | Հողի հարկ | 6450.0 | 5989.6 | 8503.3 | 3945.6 | 92.9 | 46.4 |
| 1.2 | Գույքահարկ շենքերի | 1165.2 | 494.5 | 1097.2 | 484.2 | 42.4 | 44.1 |
| 1.3 | Գույքահարկ փոխադրամիջ. | 4150.0 | 4303.8 | 5377.2 | 4333.3 | 103.7 | 80.6 |
| 1.4 | Վարձակալական հողի հարկ | 966.4 | 782.1 | 966.4 | 979.2 | 80.9 | 101.3 |
| 1.5 | Տեղական տուրք | 192.0 | 192.0 | 192.0 | 236.4 | 100.0 | 123.1 |
| 1.6 | Տեղական վճար | 2100.0 | 1320.0 | 3480.0 | 1349.2 | 62.8 | 38.8 |
| 1.7 | Այլ ոչ հարկային եկամուտ | 0.0 | | | | | |
| 2 | Պաշտոնական դրամաշնորհներ | 29845.2 | 29845.2 | 29855.2 | 29855.2 | 100.0 | 100.0 |
| 2.1 | Պետ. բյուջ. դոտացիա | 29845.2 | 29845.2 | 29855.2 | 29855.2 | 100.0 | 100.0 |
| 2.2 | Պետ. բյուջ. համ. վարչ. բյուջ.տրամ.նպատակային հատկացում | | | - | - | | - |
| II | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ՝ ԸՆԴԱՄԵՆԸ | 1181.5 | 1181.5 | | | | |
| | Այլ մուտքեր | | | | | | |
| | Համայնքի սեփակ. համարվող գույքի օտարումից մուտքեր և պետ. գույքի վաճ. մասի. | | | 651.2 | 651.2 | | 100.0 |
| 3 | Տարեսկզբի մնացորդը | 1181.5 | 1181.5 | 3274.3 | 3274.3 | 100.0 | |
| I+II | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 46050.0 | 44366.0 | 53396.8 | 45108.6 | 96.2 | 83.2 |

## ԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

/հազար դրամ/

| Հ/Հ | Ծախսերի անվանումը | 2017թ պլան | 2017թ փաստ | 2018թ պլան | 2018թ փաստ | 2017թ կատարումն % | 2018թ կատարումն % |
|---|---|---|---|---|---|---|---|
| I | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 44868.8 | 41091.7 | 49471.3 | 39306.1 | 89.4 | 79.5 |
| 1 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 26472.8 | 24024.0 | 27469.0 | 21765.7 | 90.7 | 79.2 |
| 1.1 | Տեղական ինքնակառավարում | 23108.8 | 20386.0 | 23905.0 | 18709.2 | 88.2 | 78.3 |
| 1.2 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 3364.0 | 3638.0 | 3564.0 | 3056.5 | 108.1 | 85.8 |
| 2 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 2300.0 | 2230.0 | 2300.0 | 2280.0 | 97.0 | 99.1 |
| 2.1 | ԱՂԲԱՀԱՆՈՒՄ | 2300.0 | 2230.0 | 2300.0 | 2280.0 | 97.0 | 99.1 |
| 3 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 13100.0 | 11962.7 | 12965.0 | 12066.5 | 91.3 | 93.1 |
| 3.1 | Նախադպրոցական կրթություն | 13100.0 | 11962.7 | 12965.0 | 12066.5 | 91.3 | 93.1 |
| 3.2 | Միջնակարգ ընդհ. կրթություն | | | | | | |
| 4 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 2100.0 | 2100.0 | 2100.0 | 2100.0 | 100.0 | 100.0 |
| 4.1 | Սոցիալական հատուկ արտոնություններ | 2100.0 | 2100.0 | 2100.0 | 2100.0 | 100.0 | 100.0 |
| 5 | Գյուղատնտեսություն | 400.0 | 369.0 | 492.0 | 488.4 | 92.3 | 99.0 |
| 6 | Մշակույթ, սպորտ, կրոն | 400.0 | 310.0 | 650.0 | 605.5 | 77.5 | 93.2 |
| 7 | Առողջապահություն | 96.0 | 96.0 | - | - | 100.0 | - |
| 8 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | | - | 3495.3 | - | | |
| 8.1 | Պահուստային ֆոնդ | - | | 3495.3 | - | | |
| II | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 1181.5 | 985.6 | 3925.5 | 2370.5 | 83.4 | 60.3 |
| 1 | Շենքերի և շինությունների կապ. վերանորոգում | 660.0 | 615.6 | 300.0 | - | | |
| 2 | Ոչ նյութական հիմնական միջոցներ | 120.0 | 110.0 | 100.0 | - | | |
| 3 | Վարչական սարքավորումներ | 381.5 | 260.0 | 784.3 | 474.5 | 68.1 | 60.5 |
| 4 | Այլ մեքենաներ և սարքավորումներ | 20.0 | - | 801.2 | 122.0 | | 15.2 |
| 5 | Գեոդեզիական - քարտեզ. ծախսեր | - | - | 990.0 | 989.0 | | 99.9 |
| 6 | Կապիտալ շինարարություն | - | - | 950.0 | 785.0 | | 82.6 |
| I+II | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 46050.0 | 42077.3 | 53396.8 | 41676.6 | 91.3 | 78.0 |

Սեփական եկամուտները 2018թ. հաստատվել են
19616,1 հազ. դրամ, փաստացի կատարվել է 11327,8 հազ. դրամ կամ 57,7 %:

Սեփական եկամուտները 2017թ. հաստատվել են
15023,6 հազ. դրամ, կատարվել է 13339,2 հազ. դրամ կամ 88,8%:

2018 թվականին սեփական եկամուտների պլանը 2017թվականի. համեմատությամբ ավելացել է 4592,5 հազ. դրամով, փաստացի կատարումը նվազել՝ 2011,4 հազ. դրամով:

2018թ. հողի հարկի փաստացի եկամուտը 2017թ. նկատմամբ պակասել է 2044,0 հազ. դրամով , շենք շինությունների գույքահարկը 10,3 հազ. դրամով պակասել է, իսկ փոխադրամիջոցի գծով գույքահարկը 29,5 հազ. դրամով ավելացել է:
2018թ. վարձակալական հողի հարկի եկամուտը ավելացել է `197,1 հազ. դրամով, տեղական տուրքերը ավելացել են 44,4 հազ. դրամով :
Դոտացիայի գումարը ավելացել է 10,0 հազ. դրամով:

2019թ. հունվարի 1-ի դրությամբ հողի հարկի ապառքը կազմել է 26364,5 հազ. դրամ, իսկ գույքահարկի ապառքը՝ 12508,1 հազ.դրամ:

Վարչական բյուջեի մնացորդը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1877,0 հազ.դրամ, իսկ ֆոնդային բյուջեի մնացորդը՝ 1555,0 հազ.դրամ:

2018թվականին կատարվել են հետևյալ ծախսերը
(ընդամենը 41676,6 հազ.դրամ):

| | |
|---|---|
| 1. Աշխատավարձ | 15912.0 հա հազ. դրամ |
| 2. Կապի ծառայություն | 150,0 հազ. դրամ, |
| 3. Կոմունալ ծառայություններ | 2280,0 հազ. դրամ |
| 4. Էլեկտրաէներգիա | 992,4 հազ. դրամ, |
| 5. Գույքի և սարքավ. վարձակալություն | 840,0 հազ. դրամ |
| 6. Համակարգչային ծառայություններ՝ | 28.8 հազ. դրամ, |
| 7. Տեղեկատվական ծառայություններ | 48.0 հազ. դրամ |
| 8. Ներկայացուցչական ծախսեր | 930.0 հազ. դրամ |
| 9. Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 558.0 հազ. դրամ |

10. Մասնագիտական ծառայություններ 441.0 հազ. դրամ

11.Շենքերի և կառույցների ընթ. նորոգում և պահպ. 738.0հազ. դրամ

12. Մեքենան. և սարքավոր. ընթ. նորոգում և պահպ. 45.0 հազ դրամ

9. Նյութեր 2136,5 հազ. դրամ

10. Սուբսիդիա 12066,5 հազ. դրամ

11.Սոցիալական օգնության դրամական արտահայտությամբ նպաստներ 2100,0 հազ. դրամ

12.Նվիրատվություններ ոչ կառավ. կազմակերպություններին 39.8 հազ դրամ

13. Շենքերի և շինությունների կառուցում 785,0 հազ. դրամ

14. Քարտեզագրական ծախսեր 989,0 հազ. դրամ

Սոց. ապահովագրության ծրագրերով տրվել են ֆինանսական օգնություն համայնքի նյութապես վատ վիճակում գտնվող 74 բնակիչների, այդ թվում՝ Արցախյան պատերազմին մասնակցած զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին, ժամկետային զորակոչի զինակոչիկների ընտանիքներին , ընդամենը՝ 2100,0 հազ.դրամ:

2018 թ. ընթացքում համայնքապետարան մուտք է եղել 415, ելք՝ 308 փաստաթուղթ:
Հրավիրվել և անցկացվել է ավագանու 14 նիստ:
Ընդունվել է համայնքի ղեկավարի 45 որոշում և արձակվել՝ 36 կարգադրություն:
Արձակվել է աշխատակազմի քարտուղարի 24 հրաման:
Քաղաքացիներին տրվել է 518 տեղեկանք:

Չնայած կատարված աշխատանքներին համայնքում չլուծված գերկարևորագույն խնդիրներից է մնացել .

1.Ոռոգման ջրի ցանցի կառուցումը,
2. Մշակույթի շենքի վերանորոգում,
3. Կենտրոնական ճանապարհի կապիտալ նորոգում՝ ասֆալտապատում:

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Քեշիշ -Ղուկասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ 10

« 20 » փետրվարի 2019թ ԹԻՎ 3 ՆԻՍՏ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2019թվականի հունվարի 23-ի թիվ 01/16/00348-2019 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի 2019 թվականի տարե
կան աշխատանքային պլանը /ՏԱՊ/ ՝ համաձայն հավելվածի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Ա. Յաղուբյան | ................... | ................... | ................... |
| Գ. Թեմուրյան | ................... | ................... | ................... |
| Է. Սահակյան | ................... | ................... | ................... |
| Գ. Գրիգորյան | ................... | ................... | ................... |
| Ս. Նազարյան | ................... | ................... | ................... |

Համայնքի ղեկավար Վ. Գրիգորյան

2019 թվականի փետրվարի 20
Գրիբոյեդով համայնք

04703745

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 11

« 20 » փետրվարի 2019թ    ԹԻՎ 3 ՆԻՍՏ

## ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի կենտրոնական այգու և հարակից տարածքի բարեկարգման նպատակով անհրաժեշտ ապրանքների և նյութերի ձեռք բերման համար հատկացնել 200.0 հազ. /երկու հարյուր հազար / ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Ա. Յաղուբյան | ………………… | ……………….. | ………………… |
| Գ. Թեմուրյան | ………………… | ……………….. | ……………….. |
| Է. Սահակյան | ………………… | ……………….. | ……………….. |
| Գ. Գրիգորյան | ………………… | ……………….. | ……………….. |
| Ս. Նազարյան | ………………… | ……………….. | ……………….. |

Համայնքի ղեկավար    Վ. Գրիգորյան

2019 թվականի փետրվարի 20
Գրիբոյեդով համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ 12

« 20 » փետրվարի 2019թ                                                            ԹԻՎ 3 ՆԻՍՏ

## ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ « ՄԱՔՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-րդ մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝շաբաթօրյակի կազմակերպման նպատակով.

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի բյուջեից հատկացնել 200.0 /երկու հարյուր հազար/ հազ. ՀՀ դրամ:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթներ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Ա. Յաղուբյան | .................... | .................... | .................... |
| Գ. Թեմուրյան | .................... | .................... | .................... |
| Է. Սահակյան | .................... | .................... | .................... |
| Գ. Գրիգորյան | .................... | .................... | .................... |
| Ս. Նազարյան | .................... | .................... | .................... |

Համայնքի ղեկավար                                                   Վ. Գրիգորյան

2019 թվականի փետրվարի 20
Գրիբոյեդով համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13

« 20 » փետրվարի 2019թ ԹԻՎ 3 ՆԻՍՏ

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՉԱՓԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-րդ մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքային ենթակայության շենքերի չափագրման նպատակով.

Համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդովի համայնքային ենթակայության շենքերի՝ /համայնքապետարանի շենք, մշակույթի շենք և մանկապարտեզի շենք/ չափագրման համար հատկացնել 550.0 հազ./ հինգ հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Ա. Յաղուբյան | .................... | .................... | .................... |
| Գ. Թեմուրյան | .................... | .................... | .................... |
| Է. Սահակյան | .................... | .................... | .................... |
| Գ. Գրիգորյան | .................... | .................... | .................... |
| Ս. Նազարյան | .................... | .................... | .................... |

Համայնքի ղեկավար Վ. Գրիգորյան

2019 թվականի փետրվարի 20
Գրիբոյեդով համայնք